ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԿԳԿ-26/14

ք. Երևան

«15» ապրիլի 2026թ.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պ/կ Կ. Ղարիբյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և քաղաքացի Խուդանյան Արմեն Վարոսի (Անձնագիր No՝ AP0620810, տրված՝ 08.11.2016. 027 կողմից, սոց. քարտ՝ 2711900800, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 2 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված աշխատանքը (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքը և վճարել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև 2026 թվականի ապրիլի ____ը:

2. ԿԱՏԱՐՈՂԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է կատարողի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կատարողը պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և աշխատանքի որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

3.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 7.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

3.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

3.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.3 Կատարողն իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.4 Կատարողը պարտավոր է՝

3.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

ՄՈՒՏՔ № ԿՆ-30003
«18» 04 2026

3.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի գինը կազմում է 750,000.00 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:Աշխատանքի գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

Կատարողը երաշխավորում է կատարված աշխատանքի որակի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1. Կատարված աշխատանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

6.2. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից **ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ** աշխատանքը **չընդունելու** պատճառաբանված մերժումը:

6.4. Եթե պայմանագրի 6.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 6.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի որակի և պայմանագրով նախատեսված ժամկետների պահպանման համար:

7.2. Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված կատարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

7.4 Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը հաշվարկվում և հաշվանցվում է Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

7.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Կատարողի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

9.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

ԱԶՅԾ

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.6. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.8. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10. Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9.11. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Բարձրագույն կրթության և
գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033124
ՀՎՀՀ 02704199

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Պ/Կ

---------- Կ. ՂԱՐԻԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Արմեն Վարոսի Խուդանյան
ՀՀ, Արարատի մարզ,
գյուղ Դվին, Գայի փ.,տուն 38
Անձնագիր AP062081
Տրված՝08.11.2026թ
Ում կողմից 027
Սոց քարտ 2711900800
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930098859824100

---------- Ա. Խուդանյան
(ստորագրություն)

Հավելված N 1
« » ապրիլի 2026թ. կնքված
ԲԿԳԿ-26/14 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	*Աշխատանքի անվանումը*	*Չափման միավորը*	*Ծավալը*	*Միավորի արժեքը /ՀՀ դրամ/*	*Ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/*
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	**Ցեմենտավորում և նորոգման աշխատանքներ, մասնավորապես՝**				***750,000***
	պատերի ներկում բարձրորակ լատեքսային ներկով (ներառյալ բարձրորակ նյութեր)	*մ²*	*200*	*1500*	*300,000.0*
	աշխատասենյակի և դահլիճի միջանցիկ ապակե պատի պատում գիպսեստվարաթղթե սալերով,	*մ²*	*16*	*5000*	*80,000.0*
	ցեմենտավորման աշխատանքներ, պատերի քսահարթում գիպսոնիտով ցանցավորում, հղկում, նախաներկ (ներառյալ բարձորակ նյութեր),	*մ²*	*200*	*1500*	*300,000.0*
2	Էլեկտրական լարերի տեղադրման աշխատանքներ (աշխատասենյակում և դահլիճում)	*դրամ*	*1*	*70,000*	*70,000.0*

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ ,Երևան, Օրբելի 22 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Բարձրագույն կրթության և
գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/հ 900011033124
ՀՎՀՀ 02704199
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Պ/Կ

---------- Կ. ՂԱՐԻԲՅԱՆ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Արմեն Վարոսի Խուդանյան
ՀՀ, Արարատի մարզ,
գյուղ Դվին, Գայի փ.,տուն 38
Անձնագիր AP062081
Տրված՝08.11.2026թ
Ում կողմից 027
Սոց քարտ 2711900800
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930098859824100

/ստորագրություն/

Հավելված N 2
« » ապրիլի 2026թ. կնքված
ԲԿԳԿ-26/14 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Աշխատանքի							
							կատարման	
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը*
1	45261142/2	**Ցեմենտավորման և նորոգման աշխատանքներ** (պատերի քսահարթում գիպսոնիտով ցանցավորում, , հղկում, նախաներկ (ներառյալ բարձորակ նյութեր), պատերի ներկում բարձրորակ լատեքսային ներկով (ներառյալ բարձրորակ նյութեր),9-րդ հարկում աշխատասենյակի և դահլիճի միջանցիկ ապակե պատի վերականգնում գիպսեստվարաթղթե սալերով նաև ցեմենտավորման աշխատանքներ)	դրամ	680,000	680,000	1	ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22	25.12.2026թ
2	45311100/2	**Էլեկտրական լարերի տեղադրման աշխատանքներ** (աշխատասենյակում և դահլիճում)	դրամ	70,000	70,000	1	ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22	25.12.2026թ.

**Աշխատանքների կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Բարձրագույն կրթության և
գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033124
ՀՎՀՀ 02704199

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Պ/Կ

_____ Կ. ՂԱՐԻԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Արմեն Վարոսի Խուդանյան
ՀՀ, Արարատի մարզ,
գյուղ Դվին, Գայի փ.,տուն 38
Անձնագիր AP0620810
Տրված՝08.11.2026թ
Ում կողմից 027
Սոց քարտ 2711900800
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930098859824100

_____ Ա. Խուդանյան
(ստորագրություն)

Հավելված N 3
« » ապրիլի 2026թ. կնքված
ԲԿԳԿ-26/14 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45261142/2	Ցեմենտավորման և նորոգման աշխատանքներ	-	-	-	680,000	680,000	680,000	680,000	680,000	680,000	680,000	680,000	680,000	680,000
2	45311100/2	Էլեկտրական լարերի տեղադրման աշխատանքներ	-	-	-	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000	70,000
		ԸՆԴԱՄԵՆԸ	750,000.0												

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Բարձրագույն կրթության և
գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033124
ՀՎՀՀ 02704199

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Պ/Կ

---------- Կ. ՂԱՐԻԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Արմեն Վարոսի Խուդանյան
ՀՀ, Արարատի մարզ,
գյուղ Դվին, Գայի փ.,տուն 38
Անձնագիր AP0620810
Տրված՝08.11.2026թ
Ում կողմից 027
Սոց քարտ 2711900800
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930098859824100

---------- Ա. Խուդանյան
(ստորագրություն)